

ՀՈԳԵԽՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՆՐԱՎԵՐՆԵՐ*¹

ՏԵՏՐԱԳԱՄԱՏՈՂԸ՝ ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆԸ ԵՒ ԵՆՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ

«Եհարց Յակոբ՝ և ասէ. Պատմեա ինձ զանուն քո»²:

Աստծո անունը Հին Կրակարանի երբայերեն բնագրում գրվում է չորս տառերի համադրությամբ, առանց դիակրիտիկ նշանների՝ YHWH³, որն այդ պատճառով կոչվում է տրեպրագրամատրոն կամ պարզապես՝ տրեպրագրամա՝ քառատառ գրություն:

Եհովայի վկա աստվածաբանների և այդ հսկա կազմակերպության բոլոր անդամների ամենասիրած հարցը, որ բարձրացնում են պատրեհ կամ անպատրեհ առիթով, Աստծո անվան հետ կապված խնդիրն է: «Դուք գիտե՞ք Աստծո անունը, մենք եկել ենք այստեղ, որ ձեզ հայտնենք այդ անունը, որ դուք էլ փրկվեք», - քարոզում են բոլորին, ում որ կարողանում են համոզել իրենց «առաքելության» ընթացքում:

Ավելին, այդ «անվան» հետ կապված նյութերում՝ միօրինակությամբ ու նույնաբանություններով (տավտատոգիա), նրանք «ապացուցում» են, որ Աստծու անունը պատմական բոլոր եկեղեցիները միասնականոր կերպով թաքցրել են ժողովրդից, դրանով իսկ կարարելով սատանայի կամքը: Եւ միայն հիմա իրենք՝ Եհովայի վկաները, հստակ առաքելություն ունեն «աշխարհին տալու Աստծու անունը», որպեսզի մարդկությունը զուրկ չմնա այդ շնորհից և փրկություն գտնի՝ ճշմարտությունն իմանալով:

«Ամեն ոք, ով կանչում է Եհովայի անունը, կփրկվի»⁴ կամ «Պիտի իմանան, որ ես Եհովա»⁵:

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-ԺԱ.:

2 Ծննդոց ԼԲ, 29:

3 Diacritic marks - պայմանական այն նշանները, որոնք դրվում են տառերի վրա, կամ տառերի ներքեում ցույց տալու, որ փոխառված բառերում կա որոշակի փոփոխություն, ըստ այդ տառի՝ առանց նշանի արտասանության:

4 Երբայերենն առանց դիակրիտիկ նշանների՝ יהוה:

5 Մեր թարգմանությունն է՝ « Ամեն ոք, ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի» (Հոմ. Ժ. 13): Հունարենն է՝ Πᾶς γὰρ ὃς ἂν ἐπικαλέσῃται τὸ ὄνομα κυρίου σωθήσεται: Երևում է, որ ՆԱՄ-ում միասնականոր

τὸ ὄνομα κυρίου Տիրոջ անունը թարգմանվել է Եհովա, որը փոխել է համարի իմաստը. Պողոս առաքյալն այստեղ նկատի ունի Հիսուսին, և այդ մասին պարզորոշ ասում է Թ. համարում՝ միաժամանակ ակնարկելով, որ այդ մեջբերումը (Հովել Բ. 32) մեսիական բնույթ ունի, և Նրա՝ Հիսուսի մասին է վկայում: Ուստի միանգամայն անընդունելի է սրբագրել Պողոս առաքյալին, որն, անշուշտ, ավելի լավ գիտեր Հովել մարգարեին, ըստ բրուկլինյան վարդապետները, ու տրեպրագրամատրոն փոխարինելով **τὸ ὄνομα κυρίου** ձեռով՝ քրիստոնեական աչքերով մեկնում է Հին Կրակարանը, այդ համարում տրեպրագրամատրոնը

վան եմ»⁶, - այս թարգմանությամբ է ՆԱԹ-ը ներկայացնում այդ համարները՝ փաստելով, որ միայն իրենք՝ Եհովայի վկաներն են փրկվողները, քանի որ միայն իրենք են կանչում կամ վկայում, որ Եհովան է Աստված:

«Ի՞նչ է մեր երկնառ Տօր անձնական անունը...

Արդ, Աստուծոյ անունը ԵՃՈՎԱԷ Է: Սակայն շատեր, որոնք կը դառնան զԱստուծոյ պաշտել, շատ անյարգալից կերպով վարում են այդ անուան հանդէպ: Ոմանք նոյնիսկ իր անունը Աստուածաշունչի իրենց թարգմանություններէն դուրս ձգած են եւ զայն փոխարինած են գլխագիր «SEF» եւ «AUSOLF» տիպադասներով»⁷:

Եբրայերէնը, որով գրվել է Նին Կրակարանը, բաբելոնյան գերության ընթացքում ու դրանից հետո (Բ. ծ. ա. Ջ. դար) դուրս մղվեց գործածությունից եւ դրան փոխարինեց այդ ժամանակաշրջանի խոսակցական լեզուն՝ արամեերէնը, որով խոսում էին Պաղեստինում եւ Ասորիքում: Իսկ արդեն Ա.-Բ. դդ. եբրայերէն խոսակցական լեզուն բավականին քրքրելի էր հինկարակարանյան դասական լեզվից՝ հին եբրայերէնից:

Եբրայերէնը սկզբնական շրջանում չի ունեցել ձայնավորների համար հատուկ ձայնանիշեր, գրվում էին միայն բաղաձայնները: Իսկ ճիշտ կարդալու ձևերը փոխանցվում էր բանավոր: Դա, անշուշտ, դժվարություններ էր առաջացնում պերականությունից գուրկ հրեաների համար, եւ Ե.-Ջ. դդ. Նին Կրակարանի գրքերն արագորէն սկսեցին կիրառել դիակրիտիկ նշաններ՝⁸ ձայնավորները ճիշտ արտասանելու համար⁹:

Միջնադարում մասնագետների մոտ խնդիրներ առաջացան՝ ձայնավոր հնչյունների ճիշտ արտասանության հետ կապված: Գիտական վեճեր սկսեցին եւ ցայսօր դեռ շարունակվում են. այդ բանավեճերի պարզառը, բնական է, Աստուծո անվան ճիշտ արտասանությունը գտնելն է:

עֲלֹהִים (elohiyim, el-o-heem) հոգնակին է eleoah բառի, որը եզակի թվով, որպես Իսրայելի Աստված, գործնականում չի հանդիպում. եզակի թվով են միայն այդ բառին ուղեկցող բառերը՝ բայական ձևերը, էպիտետները, ինչպես, օրինակ, Ծննդոց Ա. 1-ում¹⁰: Այս բառը հատուկ միայն Աստուծո անվանը չի վերաբերում, այն գործածվում է նաեւ այլ ժողովուրդների աստվածների համար, նույնիսկ դարավորների, հզոր մարդկանց, հրեշտակների համար է կիրառվում:

אֵדָוָן (adown, aw-done) հոգնակի թվով արտահայտում է՝ «իմ տները» իմաստը, եզակին է יָדָוָן (Addown, ad-done) - տներ:

նույնացնելով Նիսիի հետ: Մինչդեռ բրուկլինյան վարդապետները հակառակն են անում. այն վարագույրը, որ պետք է վերացնել, նրանք դրանով նորից ծածկում են իրենց սիրտն ու միտքը (Բ. Կորնթ. Գ. 13-14): Այս փոքրիկ «սրբագրությամբ» բրուկլինյան վարդապետները անպետք են այն փաստը, որ Նիսիս = Տեպրագրամատրոն:

6 Մեր թարգմանությունն է՝ «Դիտի իմանան, որ ես եմ Տեպ Աստվածը» (Եզեկ. ԼԹ. 6):

7 «Բու թագաւորութիւնդ թող գայ», Բրուկլին, 1984, էջ 16-17:

8 Diacritic marks - պայմանական այն նշանները, որոնք դրվում են բառերի վրա, կամ բառերի ներքեւում ցույց տալու, որ տվյալ բառով արտահայտվում է այլ հնչյուն, քան այդ բառի՝ առանց նշանի արտահայտածը:

9 Օրինակ՝ Արարար հատուկ անունը, որը հիշատակվում է Ծննդոց գիրքը (Ծննդ. Ը. 4), արտահայտվում է երեք բաղաձայններով՝ אֵדָוָן (ar-aw-rat), որը, եթե չլինեն դիակրիտիկ նշանները, կարելի է կարդալ թե՛ աւրաւաՏ, թե՛ ուրաւՏու :

10 «Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» նախադասության մեջ «Աստված» elohiyim-ն է՝ հոգնակի թվով, իսկ բայը՝ «ստեղծեց» - bara՝ եզակի թվով ունի:

Տեպրագրամաբոնը 777-ը, համաձայն մասնագետների, ժամանակին հինգել է որպես ՅԱՆՎԵ, բայց աստիճանաբար դադարել են այն հինգեցնել, ուղղակի փոխարինել են ընթերցման ժամանակ 778-ով: Իսկ 777-ի արտասանությունը հայերնի եղել միայն քահանայապետին, որն 777 - Yomkipur-ի՝ Քաղության օրը¹¹ Սրբաբանում արտասանել է այդ անունը, որը փոխանցվել է բանավոր՝ քահանայապետական ճյուղով: Այսօր հրեական սինագոգներում ընթերցանության ժամանակ, երբ հանդիպում է 777 բառը, այն չեն հինգեցնում, այլ փոխարենը արտասանում են – Addownay: Եւ ժամանակի ընթացքում 778 -ի ձայնավոր նշանները փոխանցվեցին տեպրագրամայի վրա, բայց դարձյալ այն չէր հինգեցվում և արտասանվում: Այսպիսով ստացվեց մի հիբրիդ բառ՝ 777: Ներագայում երոպացի մասնագետները փառացի հինգեցրեցին այդ բառը որպես ԵՆՈՎԱ, որը սխալ է: Այսօր մասնագետների մեծամասնությունը տեպրագրամաբոնի արտասանության ճիշտ ձև համարում են YAHWEH-ը, քան JEHOVAH-ն: Իսկ երբ հանդիպում էր Տեր՝ 778 և Աստված՝ 777 միասին, որպեսզի խուսափեն ավերորդ կրկնությունից՝ Ադոնայ Ադոնայ, տեպրագրամաբոնը փոխարինվում էր Էրեմիմ բառով՝ 778 777:

Ուրեմն կարելի է վստահորեն պնդել, որ մինչ օրս հայերնի չէ տեպրագրամայի իրական հնչողությունը, իսկ այն, ինչ այսօր հրամցնում են Եհովայի վկաները և որոշ թարգմանություններում օգտագործվում են (Եհովա, Եսիվ), մոտավորություններ են, որոնք տեպրագրամայի ճշգրիտ հնչողությունը չեն¹²: Այսինքն՝ լեզվաբանական առումով, տեսականորեն, հնարավոր է, որ լեզուն կորցնի իր ինչ-ինչ միավորների պարմական հնչողությունը՝ այն փոխարինելով փոխաբանական ժամանակում գործածվող մի այլ հնչողությամբ: Իսկ երբայերենում առավել եւս հնարավոր է նման երևույթ, քանի որ առկա էր Տասնարանայի ազդեցությունը և, անշուշտ, այս դեպքում լեզվաբանությանը գումարվում է աստվածաբանությունը՝ դավանանքը:

LXX թարգմանիչները, տեպրագրաման թարգմանել են հունարեն կսրոս (=Տեր) բառով, իսկ երբաերեն Էրեմիմը՝ Օ Թեծ (=Աստված) բառով, այսինքն՝ 778 777 -ը կսրոս Օ Թեծ-ով: Բնական է, որ տեպրագրամայի մասին խոսելիս պիտի հասկանալք հինկտրակարանյան աշխարհը, իսկ Նոր Կտակարանում տեպրագրաման բացակայում է, քանի որ այն գրվել է հունարենով¹³:

Այս է պարմական իրողությունը: Չնայած դրան բրուկլինյան վարդապետներն սկսեցին պնդել, որ թե՛ Նին Կտակարանում՝ այսինքն LXX թարգմանության մեջ և թե՛ Նոր Կտակարանում օգտագործվել է տեպրագրաման, իսկ արագորդ գրիչներն այն փոխարինել են համապատասխան համարժեքներով: Նայերնի է, որ Աբվիլան (Բ. դար) և Որո-

11 Ղևուր. ԺԶ.:

12 Նամեմատության համար, որպես օրինակ, կարելի է բերել հայերենում «է» և «ե», «ո» և «օ» տառերի հնչողության հարցը բառի մեջ: Այսօր այդ զույգերը նույն ձևով են հնչում, իսկ թե ինչպես են հնչել բառի մեջ Մաշտոցի ժամանակ, անհայտ է (օրինակ «սեր» և «սեր», «հօր» և «հոր» բառերում) և կարելի է միայն ենթադրել, թե ինչպես են հնչել այդ տառերը:

13 Նոր Կտակարանի մինչ ցայսօր հայերնի մոտ 5.000 ձեռագրերում և ոչ մեկում չկա Տեպրագրամաբոնը՝ Եհովա կամ Յահվե ձևով:

գինևը (Գ. դար) իրենց թարգմանություններում օգտագործել են տերապևտիկ¹⁴, բայց ոչ թե «հիջևցրել», ինչպես հետագայում թարգմանիչները KJV անգլերեն թարգմանության մեջ: Իսկ LXX-ում տերապևտիկ օգտագործվել է մեզ հայտնի հարյուրավոր ձեռագրերից ընդամենը մեկում՝ այն էլ միայն Բ. Օրինացի երկրորդ կեսի մեջ: Նոր Կրակարանի և ոչ մի ձեռագրում, ինչպես հայտնի է, չի օգտագործվել տերապևտիկ: Երկու դեպքում էլ, ամենուր, Աստուծո անունը թարգմանվել է *κύριος* (Տեր) *ὁ θεός* (Աստված) բառերով, ինչպես մեր գրաբար Աստվածաշնչում: Պարզ է, որ միանգամայն անընդունելի է Նոր Կրակարան ներմուծել տերապևտիկ՝ Եհովա հնչողությամբ, Տեր և Աստված բառերի փոխարեն:

Եհովայի վկաների աստվածաբանները նշում են, որ Մատթեոսի ավերարանը գրվել է եբրայերեն լեզվով և, հետևաբար, այնպիսի առկա պիտի լինեին տերապևտիկ, իսկ թարգմանիչները կամ գրիչները միտումնավոր այն փոխարինել են հունարեն համարժեքներով:

Նախ այս պնդումը, անշուշտ, լուրջ փաստարկ չէ, որովհետև չկա պահպանված եբրայերեն բնագիրը, այլ այդ մասին կա միայն մի քանի վկայություն որոշ հեղինակների մոտ (Պապիաս, Եսեբիոս, Իրինեոս), որոնք ենթադրում են, որ Մատթեոսի ավերարանի հունարեն տարբերակը թարգմանությունն է արամեերենից:

«Նկատի ունենալով Մատթեոսի ավերարանի լեզուն, ոճը և շարահյուսությունը, հնարավոր չի թվում, որ այս ավերարանը լինի արամեերեն լեզվով գրված ավերարանի թարգմանությունը: Նկատելի է, որ նույն ավերարանից հունարենի է վերածել արամեերեն տեքստը և այն հարստացրել նոր նյութերով»¹⁵: Այսինքն, բուն իսկական իմաստով բնագիր կարելի է համարել հունարեն լեզվով Մատթեոսի ավերարանը: Իսկ Եսեբիոս Պոնտացին անգամ տերապևտիկ հունարեն չի թարգմանել, այլ փոխել է «*Pipi*» հունարեն ձևը¹⁶:

Եհովայի վկաների պնդմամբ պատմական քրիստոնեությունը նպատակ է ունեցել մոռացության տակ խառն Բրիտանիայի հայրենա՝ Աստուծո անունը՝ ԵՃՈՎԱՆ, որ նա սովորեցրել է Տերունական աղոթքում: Մինչդեռ Տերունական աղոթքի՝ «Հայր մերի» երկրորդ հարվածը՝ «սուրբ լինի Բա անունը», ամենևին չի նշանակում իմանալ կամ կարողանալ վերադարձրել ճշգրտությամբ տերապևտիկ պատմական հնչողությունը, որը կյուսավորի ու կմաքրի¹⁷, այլ ծանոթանալ, ճանաչել Աստուծո, նրա Լույսը, խոսքը, սրբությունը և այլն: Իսկ հնչողության հարցն ավելի գիտական բնագավառին է վերաբերում, և վարդապետություն չի կարելի ստեղծել անհայտ ու չիմացած բաների վրա հիմնվելով:

Աստուծո անունը «սուրբ պահելը» հենց Տասնաբանյայի երրորդ պատվերի կիրառումն է մեր կյանքում, ու ոչ թե պատեհ-անպատեհ տերապևտիկ սխալ հնչողությամբ Աստ-

14 Walter Martin, *The Kingdom of the cults*, Minneapolis, 1997, էջ 125:

15 Եգնիկ ծ. վրդ. Պերպոյան, Ներածություն Նոր Կրակարանի, Ս. Էջմիածին, 1996, էջ 39-40:

16 Տեն Lampe, *A patristic greek lexicon*, Oxford, 1982, էջ 1082:

17 Божье имя пребудет вовеки, Бруклин, 1984, էջ 31:

ծու անունը հասարակ անվան հավասարեցնելը, արժեզրկելը: Եհովայի վկաները, իրենց բռնած դիրքով, փաստորեն հենց այդ են անում. Աստուծո անունը սուրբ պահելու փոխարեն, այն ավելի անիմաստ ու դատարկ տեղը օգտագործում են՝ այն հավասարեցնելով շատ հասարակ անուններին:

Եհովայի վկա աստվածաբանները համոզում են, որ տերապիայի չարատեսները Նիսի Ժամանակ ուղղափառ հրեաների մոլորություններից էր, նրանք պարտավոր էին արտասանել Աստուծո անունը, բայց չէին արտասանում¹⁸: Իսկ Նիսու, ջրնդունելով այդ մոլորությունը և սխալ կարծիքը, այն օրը, երբ նա ժողովարանում կարդաց Եսայի մարգարեի հայտնի հատվածը (Եսայի ԿԱ. 1-2), նպայման բացահայտ արտասանել է այդ հատվածում առկա Աստուծո անունը, այսինքն՝ Տերապիայի: «Եթե Նիսու չարատեսներ Աստուծո անունը կամ այն փոխարինելով Տեր և Աստված բառերով, ապա դա կնշանակեր, որ նա հեղինակ է հրեա կրոնական առաջնորդների ոչսուրբգրային ավանդություններին, որը հնարավոր չէ»¹⁹: Ներկայումս, պնդում են նրանք, եթե Նիսու արտասանել է տերապիայի, մենք էլ պետք է նույնը անենք:

Սա միանգամայն անընդունելի է, քանի որ անցյալը վերապատմելը՝ ներկայի պահանջարկների համաձայն, այսինքն՝ «սրբագրել» անցյալում կատարված դեպքերը, անարամբանական է²⁰:

Տերապիայի հնչողության այսօրվա ձևը Եհովայի վկաները վերցրել են KJV հրապարակությունից, ուր առաջին անգամ այն չթարգմանվեց և որպես Jehovah փոխարինեց տերապիային:

(Շարունակելի)

ՂԵԻՈՆԴ ՔԱՆԱՆԱ ՄԱՅԻՆՅԱՆ

18 Божье имя пребудет вовеки» Бруклин, 1984, էջ 14:

19 Божье имя пребудет вовеки» Бруклин, 1984, էջ 15:

20 Ավելի անարամբանական է վկաների այն պնդումը, թե հոմոսեքսուալները սխալ ձևով են խաչել մահապարհներին, պետք է ցից հանելին: Տես «Էջմիածին», 2012, Բ, էջ 115: